

առանձին թերթեր հրատարակելն, քան թէ պահանջել վարկպարազի, որ բոլոր ազգային մամուլն և գրագէտ դասը գաւառական լեզուով խօսին և գրեն, որ ոչ միայն անպատշաճ է, այլ ունի և պէսպէս դժուարութիւնս :

Շարունակելի

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

ԳԵՂԱՄԱՅ ԾՈՎՆ

ԾԻ

ՍԵՒԱՆ ԿԱՄ ՍԵՒՎԱՆՔ

Թողլով ճեպընթաց կառքին ճանապարհի վրայ դառնաւ թարձրագոր գիւղորէքը՝ հանդերձ իրենց սառնամանեօք և սակաւամարդութեամբ, սկսանք իջնել Արեգունի լեռանց և բլրոց գոտւոյն հարաւային կողին վրայէն : Դեռ խաւարն զմեզ կը պատէր, թէպէտ իւրաքանչիւր անուին հոլովելուն և գէպ ի յառաջ ամէն մի նոր չրջան ընելնու՝ կը զգայինք միշտ թէ ահա անոր աղջամղին թագաւորութիւնն կ'ոչնչանայ, և կը ծագի ճաճանչազգի լուսանշոյլ արեգակն՝ զարթուցանելու և կենդանայնելու բոլոր տիեզերքս : Եւ ահա զմեզ չրջապատող լեռինք տակաւ տակաւ կը սկսին ցածնալ և յանկարծ կարծես աներևոյթ ձեռք մը մէկգի տանելով առջնին տարածուած մոխրագոյն զանգուածը, կը տեսնենք նշտաւոր լծին ընդարձակ տարածութիւնն՝ չրջապատեալ բարձրաբերձ լեռանց շղթայիւր : Ինձ այնպէս կը թուէր, թէ մի բոպէի մէջ փոխադրուած ըլլամ « Նէպոլէոն ծոցոյն » քով, ինչպէս կըսէ Ուվարով կոմսուհին՝ իւր հովկասու վրայ յորած դիտողութեանց մէջ, այնպէս յստակ, ջինջ և գեղեցիկ էր առջինիս տարածուած ջրային մակերևոյթն :

Մարդ չիկրնար ինքզինքը զսպել ինչնայօժար զարմացական բացառանութիւն մ'ը ընելէն՝ ընտելեան այսպիսի անկարծելի փոփոխութեան վրայ, երբ յետ երկար ուղեորութեան բարձր լեռանց միջով որք իրարու վրայ բարձրանալով հորիզոնը կ'ամփոփէին, և ահա կը տեսնես յանկարծ հորիզոնին մէջ կորսուած, անձիւր և ընդարձակ տարածութիւնն, որ խաբելու չափ ծովու գաղափար կու տայ, զոր անշուշտ չես յուսար տեսնել այն կողմերը :

Հայերն մեր այս նկարագրած լինը Ու-Վանքի կամ Սեւանայ ծով կը կոչեն, որ սաէպ կը յիշատակուի հայկական պատմագրութեանց մէջ, յորս ուրիշ անուն մ'ալ կը ստանայ « Գեղամայ ծով », ըստ հին աւանդութեան՝ Ամասիայի Գեղամ որդւոյն անուամբ կոչուած :

Սոյն լինս կը գտնուի վեց ու կէս հազար ոտնաչափ բարձրութեան

վրայ, որ չըջապատեալ բարձր ժայռուտ պարսպով մի, կը հանգչի շրջակայ լեռանց ընդարձակ հիմանց վրայ, և կը բարձրանայ Հայաստանի միջավայրը՝ իբր հսկայ բաժակ մը: Սոյն լճակիս ջուրն՝ մութ կապտագոյն է՝ նման Միջերկրական ծովուն. որուն վրայ երբեմն կը սուրան սպիտակ հողմածուփ ալիքներ, որ բիրտուր պղպլակնե-րու կը փոխուին՝ բախելով մերթ ափանց ժայռերուն, և մերթ՝ ա-փունքէն սակաւ մի հեռի մենացեալ կղզեկին, որոյ վրայ կանգնած է «Սև — վանքն»: Ճանապարհն սկսաւ նեղնալ լեռանց շարունակեալ երկարութեան վրայ՝ ուղղուելով գէպի մոլորկանաբնակ գիւղն «Լէն-նովկա»: Այլ կողմերնիս կը տարածուէին մոխրագոյն՝ հրաբխային ծագմամբ լեւներ, իսկ ձախ կողմերնիս՝ խիստ զառիվայր մը՝ մինչև ի ջուրն: Թեթեւ զառիվայրի մը վրայ մեր ձիերն ախոյժ կը վարգէին, և կառքերնիս վերստ վերստի վրայ փոփոխելով՝ մերթ ընդ մերթ շրջա-նայ ժամանակ արագ թաւալելով՝ սաստիկ յոռաջ կը մղուէր փրփրե-րախ ձիերուն վրայ: — «Ահա այս տեղ ֆուրդունը խորտակեցաւ», մրմռաց կառավարը՝ մեզի դարձնելով իւր վայրենի արեակէջ դէմն և մատնանիշ ընելով գրեթէ դուգաթնահայեաց կարկա: մի՛ քանի մի տասնեակ սաժէն ընդարձակութեամբ: Միայն վար նային իսկ սոսկալի էր և սարսափի՝ այն մոխրագոյն և սրածայր ժայռերուն վրայէն՝ որ ջրոյն մէջէն դուրս ցցուեր էին, և որոց ստորոտն խուլ ձայ-նով մը կը մռնէր անհանգիստ ջուրն՝ անդու մաքառելով և փրփրալով քարանց մէջ: Մօտերս աստ զահավիժեր էր ֆուրդուն մը չորս ձիերով որոնք չեն կրցած դ.մ դնել՝ զառիվայրին վրայէն արագ թաւալելով զիրենց մղող ծանր կառքին: Ակնթարթի մի մէջ ֆուրդունը, ձիեր և մարդիկ կը գահավիժին ցած պատշգամի վրայէն և ամէնն ալ գլորտըկելով վար կը թափին՝ առանց ջուրը հասնելու: Ֆուրդունը կտոր կտոր կ'ըլլայ և ձիերն կը ֆնասուին. իսկ մարդիկն — ինչպէս հրաշք չկոչել այս դիպուածս — ամէնքն ալ ողջ և անֆնաս մնացին:

Թողլով սոյն վտանգաւոր վայրը, ուր մեզ պա՛ իւր ընել և համար՝ սակաւ մի կանգ էր առել կառապանն, դարձեալ սկսանք մեր ճա-նապարհն յառաջ տանել լեռանց կողերէն և ափանց երկայնութեամբ. ուր տեղ տեղ շատ կը նմանէր հարաւային Գաղղիոյ ափանց, զոր route de la corniche կը կոչեն. միայն թէ պէտք էր աւելի ճշդու-թեան համար տեսարանին վրայ յաւելուլ մի քանի հնդկաթղզեանի, հալուէ, կամ խումբ մի արմաւենիաց: Արևն այլ, որ խիստ քիչ ան-գամ կը պատահի այսպիսի բարձր տեղեր, գէպ ի հարաւ կենդրոնա-ցուցած իւր զօրութիւնն, կ'արձկէր մեր վրայ անդադար իւր տապա-ղին ճառագայթները անամպ և կապոյտ երկնից բարձրութենէն: Այլ ոչ. կ'իմանանք իսկոյն թէ Գաղղիոյ մէջ չենք, — ահա ցած և միահարթ յարկով տուններն բարձրաձայն կը վկայեն մեզ զայս:

— « Կարելի չէ արդեօք այս երեկոյեան ընթրիքնիս՝ թարմ կար-
մրախալստ ձկներով պատրաստել »: այս եղաւ մեր առաջին հարցն
ճանապարհին վրայ մեզի պատահող զիւղապետին, Սեանայ լճին
կարախալսայտ ձկանց պրօնչելի համին պատճառաւ, որք զրեթէ
հաւասարապէս հոշակուած են բոլոր Անգրակովկասու մէջ, ինչպէս
Ռուսաստանին մէջ համաբաւորք են մոսկուական կալաչք¹, կոլովե-
նեան պուտիլք², Աստրախանու ձկնկիթն և վրյորգեան բոկեղք:

— « Անկարելի է, տեսա՛րք իմ, քսաւ նա, ոչ մի տեղ չեն դտնուիր,
վասն զի ներկայս՝ արգելեալ տարին է »: Տէրութեան կողմանէ այս-
պիսի օրէնք մի գնելու պատճառն է տեղւոյս ձկանց արտաքոյ կարգի
նուազութիւնն. վասն զի մինչդեռ յառաջն անհամար բազմութեամբ
լճին մէջ կը կայտուէին, իսկ վերջերս բոլորովին նուազեցան: Այս
օրինաց համեմատ ամէն երեք տարի անգամ մի ձկնորսութենէ կը
դադրին. դժբաղդաբար մեք այլ ճիշդ այն ժամանակ պատահեցանք,
երբ մարդկանց պահք էր և ձկանց լիութիւն և ամենայն ազատու-
թիւն աճելու և բազմանալու ինչպէս ծովու աւազն, բնաւ վախշունե-
նալով ձկնորսի անյուսթ ուռկանէն, Բայց այս օրէնքս՝ բացառու-
թեամբ մի թոյլ կու տայ միայն լճին եզերաց մօտ յտնուող բնակչոց
որսալ սակաւ մի իրենց յատուկ գործածութեան համար:

— « Ամենինի հող մի ընէք », վրայ բերաւ ցամաքային պահակե-
րաց ուրիւսգնիկն³, « կրօնաւորաց քով ամենայն ինչ կը գտնուի,
նորա արդէն իսկ ձեզ կը սպասեն »:

— « Ի՞նչ, այդ Սե-վանքոմ. և տնդ կարելի է գնալ »:

— « Ինչու չէ, 'ի հարկէ »:

— « Նաւակ կայ »:

— « Առաւօտունէ պատրաստուած է »:

— « Եթէ այդպէս է, ուրեմն գնամք »: որոշեցինք:

Եւեմ և ապահով նաւ մի ամբողջեց իւր մէջն ամբողջ մեր ընկե-
րութիւնը, և բաւական արագութեամբ յառաջ մղուեցաւ՝ ուղղուե-
լով դէպ 'ի կղզին, որ մեզմէ 6 մղւնի չափ հեռի կը գտնուէր: Թիւս-
վաքը՝ տեղացի մոլոկան գեղեցիկ և կարմրայտ երիտասարդք, ամե-
նին առստանմանք, բոլոր ջանքերնին թափեցին՝ որ իրենց մօժն ե ճար-
տարութիւնը յուցընեն: Երբունի ալեգարգ ղեկավարն ուշի ուշով
կը գիտէր նաւերնուս ընթացքն. և երբ դուրս ելանք այն փոքրիկ
ծոցէն՝ որոյ ափանց վրայ կը տարածուի Ելենովկա (գիւղն), հրա-

1. Калачь — Տեսակ ինչ սպիտակ հացի:

2. Пасшила — Հիւթ պտղոյ եփեալ չաքարով կամ մեղրով:

3. Урядник — Ստորին աստիճանաւոր խազախաց:

մայեց — « Առաջատար բացէք » : — Թեթև հողմիկն ուռեցուց զառա-
գաստն, և նաւն մեղմով իմն հակելով կողին վրայ, օրացաւ Սեանայ
լ՛ին ընդարակութեան վրայ, որ իւր մեծութեամբ առաջինն է բո-
լոր Անդրակովաստ մէջ : Իւր երկայնութիւնն 67 վերստ է, և լայ-
նութիւնն՝ 30, իսկ չորպատին բովանդակ չափն 200 վերստ է : Տեղ
տեղ նորա խորութիւնն 90 սաթէնի կը հասնի, որ խիստ մեծ թիւ է,
և այստ միայն կարելի է հաւաստեալ ցուցընել, թէ լիճն կը գտնուի
մի այնպիսի խորխորատի մէջ, որ անշուտ ձևացած է երկրաբանա-
կան յեղափոխութեամբ մի :

Միշտ կենդանի և մարդաբնակ դաշտի մի պատկերն ընծայելով
լիճն, այժմ « արգելիտլ տարւոյն » պատճառաւ բոլորովին անապատ
և մոռեալտիպ ամայութեան կերպարանք առեր է : Զկան արդ. ձրկն-
որսաց նաւակներ, մինչդեռ ամբողջ ամառն խիտ խիտ խռնուած էին
բոլոր վարձեալ նաւակներ ափանց երկարութեամբն : Բոլոր նոքա
գացին քաղուեցան, և փոխանակ անոնց որորք և հողամաղք՝ միւրթ
ողբաձայն կոխններով ջրոյն վրայ կը լիւշտին, և մերթ կ'իջնեն կը
դադարին ծանծաղուաներու մէջ՝ տիտուր ծովագնացուց հետ միասին :

Սակաւ մի յետոյ լիճն պիտի ստանայ իւր առաջին կենդանութիւ-
նը. վասն զի պիտի բացուի աշնան նորա վրայ աշխոյժ տուրեալ մի,
շարժում և իրարանցում : Հայ վաճառականք կը բեռնաւորեն 70 ի
չափ մեծ նաւեր փայտի և ածխով՝ զորս կը գտնեն Դելիժանի՝ քաղ-
անձաւին և Արեգունի լեռանց կողերուն վրայ, և կը տանին քու-
պուխը գիւղէն մինչև 'ի քաղաքն Նոր-Բայազիդ, ուր ամենեւին ան-
առա չկայ. և անտի դատարկ նաւերը լեցնելով ցորենիւ և ուրիշ տըն-
տեսական պարենիւք, կ'ուղղուին դարձեալ 'ի հիւսիս : Ընդհակառակ,
կըն Մուրկանք բոլոր ժամանակնին երկրագործութեամբ և ձկնորսու-
թեամբ կ'անցնեն, որոնք այլ և այլ ընկերութիւններ կազմելով,
տեղւոյս գլխաւորէն կը վարձեն լճիս զանազան մասերը, որոց հա-
մար՝ ըստ քանակութեան տեղւոյն և ըստ առատ կամ՝ նուազ որոց՝
կը վճարեն 400—500 ուրլի ամէն երեք տարուան համար : Սյս
լճիս լաւագոյն ձուկն համարուած է կաւմախալաշտն անուանուած տե-
սակն. երկրորդ՝ խրաւուշի (хромья) կոչուածը, որ շատ նշանաւոր
է իւր մեծութեամբն, և եր, որդ՝ յեխաշ (укаш) : Սեանայ լճին
կարմրախայտն՝ շատ ախորժահամ լինելուն համար՝ կ'ուղարկուի 'ի
Տփղիս և յայլ քաղաքս, և ապխտելով զայն կը պահեն : Սակայն
մեծաւ մասամբ աստ իսկոյն թարմ թարմ կը սպառեն, և տեղւոյս
ձկանց առ և տուրն կամ վաճառականութիւնն շատ հարուստ և շա-
հաւոր չէ, ինչպէս անուանի է հիւսային Բուսաստանի մի քան լճն.

1. Делижанъ — Իլկան Թղթատարական՝ հանդերձ հեռագրաւ, լճիս մօտերը
'ի հիւսիս :

րուն ձկանց վաճառաշահութիւնը, կամ գետոց՝ ինչպէս Աստրախանին, և կամ Աստուրաճային նախախնամութիւն՝ կոչուածին՝ Անգրակովկասում մէջ:

Որպիսի մեծ զանազանութիւն կը տեսնուի աստ և անդ, եթէ զընոյ և եթէ որսոյ: Այնտեղ « Աստուրաճային նախախնամութեան » մէջ մի անգամ միայն ձկանց որս ընելու արտօնութիւն ստանալու համար, յայտնի է թէ ամենէն աւելի յաջող և առատ որսոյն համար, 70%) հազար ռուբլի կը վճարուի վարչութեան. յիշուի զարմանալի է այսչափ դրամ վճարելէն ետքը՝ շահ ևս ընել: Եւ թէպէտ առջի բերան սոյն թիւս չափազանց կ'երեւի, սակայն երբ համեմատենք ստացած որսոյն հետ մէկտեղ, ոչ թէ միայն բոլորովին համեմատ կը գտնուի՝ այլ և նուազ: Ըստ այսմ, յամի 1877՝ կարգանով իրեն վարձելով զայն, մէկ անգամուն 18 հազար թառափ՝ որսաց, որ 40 հազար ռուբլի կ'արժէր: Ուրիշ տարապայման որս մ'ես ընելով կարմիր ձկանց, մորէից, սպիտակ գլխիներու և այլն, որք բիւրաւոր կը գտնուին, և բազմագոյն ևս հասարակ ձկներու որք միլլիոններով կը հաշուին, ամենամեծ շահ լրաւ ձկանց տէրն:

— « Ինչպէս, արդեօք յաճախ կը ճանապարհորդես սոյն նաւովս » — հարցուցի ծերունի նաւադղին:

— « Գրեթէ ամէն օր, և երբեմն ինչպիսի մորիկներ կը հանդիպին. միայն անոնց տեսքն իսկ զմարդ կը տարտափեցնէ. վերջը երբ դառնալու լինինք, պիտի տեսնէք թէ ինչպէս ալիքներն պիտի ծփան, վասն զի հոգն կարծեմ կը սաստկանայ: Արդէն իսկ լծիս վրայ ճանապարհորդելն խիստ դժուարին է և վտանգաւոր, վասն զի իւրաքանչիւր ծործորին միջով ձիւնապատ գագաթներէն այլ և այլ հողմունք կը շնչեն. համարենք թէ հողմի մը հետեւելով սկսիս եզերքով գնալ, ահա յանկարծ ուրիշ մը կողէն մղելով զայն կը խտտորցնէ. և մինչդուռ քրտնաթաթաւ կը ջնասա անոր գէմ գնել, ահա երրորդ մ'այլ վրայ կը հասնի. — կարող ես երեակայել թէ ինչ կը պատահի այն պիւսոյն: ... Մենք դարձեալ փորձառու մարդիկ լինելով տեղեակ ենք այսպիսի պատահարաց. բայց վաճառականներն յաճախ կը չըրին լծին մէջ, և շատ խոր լինելով, եթէ վաճառքներն ընկզմելու լինին ջրոյն մէջ, այլ ևս անկարելի է գտնել զանոնք: Սակայն մինչև ցարգ Աստուծոյ ողորմութեամբն՝ մեր զործերն աղէկ գնացին. թէպէտ եղան այլ և այլ ձախող դէպքեր, մինչև մարդիկ իսկ խեղդեցան, ինչպէս անցեալ գարնան, բայց մենք զրեթէ ամէն անգամ անմիտա հասանք 'ի ցամաքն: »

4. Божій Промысел — (Բոժիյ Պրոմիսլսլ — Աստուծոյն Նախախնամութիւն) — Համբաւուոր ձկնորսավայր, 27 վերստ հեռի 'ի Սալեան (որ նոյն է Մահմուտապատ) գեղէն՝ կուրի գետաբերին մօտերը, Պաքուի նահանգի մէջ:

2. Стерог — (Esturgeon stellifere) — Թառափ (Գծ. Մերին պալլէ), որ և (ռմկ.) Զ-նիի:

Լռեց ծերն և բովանդակ իւր ուշադրութիւնն սեւեռեց քարանց շարքի մի վրայ, որուն ամտէն պէտք էր շրջանով դարձնել նաւը։ Անցնելով այն տեղէն, անկէ վերջ այլ ևս յստակ կրնայինք զանազա-
նել առջկանիս կանգնած բարձրագիւր կղզին, որ հեռուէն կէտ ձկան
մի թիկանց կը նմանէր։

Անոր վրայ կը տեսնուէին վանքին մի քանի շէնքերն, իսկ վերը պայ-
ծառ օդոյ մէջ որով կը տեսնուէր՝ հին և արդ կործանեալ եկեղեցւոյն
դմբէթն։ Մնացեալ երկու վերստն ևս առանց իմանալու կտրեցինք
անցանք, և իսկոյն նաւերնիս մտնելով փաքրիկ ծոցին մէջ, և արդի-
լուելով սեւագոյն մեծ մեծ նաւերուն մէջ, (որովք ուխտաւորներն և
բարեպաշտներն վանքը կու գան), կանգ առինք միջակ նաւամատու-
ցին մօտ։

Նաւէն դուրս ելնելով՝ զուարթ և հետաքրքիր դիմօք վաղեցիներ
քարայէն նեղ ճամբուն վրայէն, և առաջնորդեալ ի կրօնաւորաց ներս
մտանք վանի լայն դռնէն, ուր կը տեսնուէին կարգաւ ցած և միա-
յարկ շէնքեր՝ տափակ ծածրով մի, որ առ ի շեղ դրիւք յենած էր
սեանց վրայ։ Չախակողմը ամէնն այլ խցիկներ էին ուխտաւորաց
համար, որք կու գան աստ մեծամեծ ասեի օրերն՝ մի քանի հարիւր
հոգի բազմութեամբ։ և կոյին ևս ուրիշ վանական տեղեր։— իսկ ա-
ջակողմը քարայէն պատ մի և վաղեմի եկեղեցին՝ հանդերձ փայտա-
կերտ փոքրիկ զանգակատամբ։

Դրան ջով հանդիպեցաւ մեզ վանահայրն՝ երապետ վարդապետ
Բուրուլեանց, որ գէմբէն քառասնամեայ մէկն կ'երևէր։ Ուսերէն
և ոչ իսկ բառ մի գիտէր, որով ստիպուած էինք բան մի հասկնա-
լու և հասկցնելու համար կամ վերոյիշեալ ուղիւսդիկին դիմել և
կամ մնկատակի նման նշանացի խօսիլ, որքան կարելի էր այն։ Վա-
նահայրն հաղորդեց մեզ թէ բոլոր կղզւոյն բնակիչներն գործաւորաց
հետ միասին 40 հոգւոյ չափ են, իսկ միայն կրօնաւորքն՝ 25 հոգի։
Կ'ապրին նոքա երկու գիւղորէից հասոյթով, ջաղացքներով և հաւա-
տացելոց նուէրներով։ Բաց աստի իրենք իրենց պարտէզը կը մշակեն.
ամէն օր կրօնաւորներն պարտաւորեալ են 4 անգամ եկեղեցի գնալ ա-
ղօթելու, և այլն։ Վերջապէս ըսաւ մեզ այն բանը, ինչ որ պէտք էր
ամենէն առաջ ըսել և անով սկսիլ, թէ ունի ինքը իւր կրօնաւորաց
մէջ երեսնայ մը՝ որ ուսերէն կը խօսէր, ուստի խնդրեցինք իրմէն
որ կանչէ զանիկայ, որուն հետ պիտի կարենայի խօսիլ անթարգման
և ամենայն դիւրութեամբ վանքն այլ պարտիլ։

Եւ այսպէս, վանահօրէն քանի մի ստացած տեղեկութիւններով
և ինչ որ կրցայ դիւանատունէն քաղել, կարողացայ համառօտիւ
սոյն վանքիս պատմութիւնը գրել, որ նման մեր Սոչոյնցկի վանքին՝
յանցաւոր և անհնազանդ քահանայից պատրաստեղի մ'է։

Շարահապէի